600.0248.14.06.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2017 թվականի №248Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» №397Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների՝

1) 1-ին կետի 15-րդ ենթակետում «և ապստամբությունները» բառերը փոխարինել «, ապստամբությունները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը» բառերով.

2) №2 հավելվածի՝ սպասարկման որակի ցուցանիշների՝

ա. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Բաժանորդների ջրամատակարարման ընդհատման տևողությունը չպետք է գերազանցի 36 ժամը, իսկ 500 մմ-ից մեծ տրամագծով մայրուղային ջրատարներով իրականացվող ջրամատակարարման ընդհատման դեպքում՝ 72 ժամը:».

բ. 15-րդ կետում «ժամանակահատվածում» բառից հետո լրացնել «, գրավոր, էլեկտրոնային եղանակով, հեռախոսազանգի միջոցով կամ անհատապես ծանուցման այլ եղանակով» բառերը.

գ. 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Վթարային ընդհատումների դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է վթարային ընդհատման օրվա, սկզբի ժամի և ջրամատակարարման վերականգնման կանխատեսվող ժամի մասին հնարավորինս սեղմ ժամկետում հեռուստատեսությամբ, գրավոր, էլեկտրոնային եղանակով, հեռախոսազանգի միջոցով կամ անհատապես ծանուցման այլ եղանակով իրազեկել Բաժանորդներին:».

դ. 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

ե. 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. Նոր միացման դեպքում կառուցվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, որը ներառում է Լիցենզավորված անձի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից մինչև նոր բաժանորդի հետ սահմանազատման կետն ընկած հատվածը, նոր բաժանորդի հայեցողությամբ և հաշվին կառուցում է Լիցենզավորված անձը կամ նոր բաժանորդը, բացառությամբ առևտրային հաշվառքի սարքի ձեռքբերման և տեղակայման, որն իր հաշվին իրականացնում է Լիցենզավորված անձը: Լիցենզավորված անձի կողմից նոր համակարգը կառուցելու դեպքում կառուցման ծախսերը Հանձնաժողովի կողմից սահմանված առանձին դեպքերում կարող են փոխհատուցվել նաև վարկային կամ ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
14 հունիսի 2017թ.